ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՋՊԳՄ-1

Ք.Երևան **«01».«11». 2019թ.**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ս. Մաչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Մարտունի համայնքի քաղաքապետարանն, ի դեմս քաղաքապետ Ա.Ավետիսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Ք.Մարտունի, Շահումյան 2 հասցեում գտնվող քաղաքապետարանի կաթսայատան շահագործման և սպասարկման համար ինչպես նաև կոմունալ ծախսերը կատարվելու են Կատարողի կողմից:

1.2 Կատարողը՝ իր սեփականությունը հանդիսացող, Մարտունի, Շահումյան 2 հասցեում գտնվող շենքից 45 քառ մետր տարածք Պատվիրատուին է տրամադրում անժամկետ և անհատույց, Մարտունու զբաղվածության տարածքային կենտրոնի /այսուհետ՝ ՋՏԿ/ կարիքների համար, որպես գրասենյակ օգտագործելու նպատակով: Իսկ տարածքի շահագործման ընթացքում կաթսայատան սպասարկման, ինչպես նաև կոմունալ ծախսերի համար Պատվիրատուն պարտավորվում է Կատարողին է վճարել այդ ծառայությունների դիմաց:

2.Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

2.1 Կատարողը ապահովում է Ք.Մարտունի, Շահումյան 2 հասցեում գտնվող Պատվիրատուի կողմից զբաղեցված 45 քառ մետր տարածքի ջերմության անխափան սպասարկումը:

2.2 Պատվիրատուն սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծախսերի համար վճարում է սույն պայմանագրի 4-րդ կետում նախատեսված ժամկետում:

3.Մատուցված ծառայությունների հանձնման և ընդունման կարգը

3.1 Կատարողը Պատվիրատուին ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանում ծախսերի փոխհատուցման հանձնման- ընդունման ակտ:

3.2 Ակտում նշվում է հաշվետու ժամանակաշրջանի փոխհատուցման ենթակա ծախսերի արժեքը՝ ամսական կտրվածքով

4. Վճարումների կարգը և չափը

4.1 Սույն պայմանագրով Կատարողին փոխհատուցման ենթակա գումարը՝ յուրաքանչյուր ամիս, կազմում 40000 ՀՀ դրամ;

4.2 Մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-ը Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում հաշվետու ամսվա համար հաշիվ:

4.3 Փոխհատուցման ենթակա ծախսերի համար Պատվիրատուն պետք է վճարի մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ՝ բանկային փոխանցումով: